ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 սեպտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

130
(2610)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 91

«Ես վերցրել եմ պատասխանատվություն՝գնալու ծանր որոշումների՝ հանուն խաղաղության, բայց դրանք չեն նշանակում Հայաստանի Հանրապետության պետական շահերին հակասող որոշումներ: Այդ որոշումներին պիտի գնանք՝երաշխավորելու Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, տեւական կայունությունը, խաղաղությունը»,- այս խոսքերը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել է երեկ Ազգային ժողովում: Այսպիսի հայտարարություններ 2020 թվականի նոյեմբերի իննից հետո բազմիցս ենք լսել, եւ նա ոչ մեկ անգամ հայտարարել էր, թե ցանկացած որոշում արվում է նրա համար, որ սահմաններն ամուր լինեն: Օրինակ՝ 2020 թվականի նոյեմբերի 22-ին Երեւանում Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը հանդիպել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ, պաշտոնական հաղորդագրության համաձայն, քննարկել առաջիկա անելիքները: Փաշինյանն իր խոսքում ասել էր. «Պետք է կենտրոնացնենք ուժերն Արցախում բնականոն կյանքը վերականգնելու, մեր հայրենակիցների վերադարձն ապահովելու եւ անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար»: Այս հայտարարությունից երկու տարի անց ոչ միայն Արցախում բնականոն կյանքը չի ավերականգնվել, այլեւ Հայաստանի ապագան է հարցականի տակ. սա նշանակում է, որ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում իրական գզվռտոց է սկսվել մի քանի պատգամավորների՝ հրապարակ նետած առաջարկ-թեզից հետո: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ական պատգամավորներ Մարիա Կարապետյանը, Սոնա Ղազարյանը, Լենա Նազարյանն ու Արսեն Թորոսյանը սեպտեմբերի 13-ի առավոտյան՝ մինչեւ Փաշինյանի խորհրդարան գալը՝ խմբակցության նիստի ժամանակ, հայտարարել են, թե կարելի է դիտարկել Ադրբեջանի՝ տարածքային ամբողջականության ճանաչման պահանջը ու վերջ տալ սահմանային չդադարող լարվածությանը, ասել է թե՝ Արցախն Ադրբեջանի մաս ճանաչել ու, այսպես ասած, մեկընդմիշտ փակել թեման: Հայտարարությունը, բարեբախտաբար, միանշանակ չի ընդունվել, բայց, մեր աղբյուրների փոխանցմամբ, վերոնշյալ պատգամավորները չեն ընկրկել ու այսօր էլ շարունակում են համոզել իրենց գործընկեր պատգամավորներին, թե այս պահին միակ լուծումը դա է: «Ես չեմ պատրաստվում մեկնաբանել խմբակցության դռնփակ նիստը»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Սոնա Ղազարյանը՝ ըստ երեւույթին չիերքելով, որ նման առաջարկով են հանդես եկել: Արսեն Թորոսյանն էլ թեեւ տեսավ մեր հաղորդագրությունը, բայց այդպես էլ չարձագանքեց դրան: Փաստորեն, երբ Հայաստանը փաստացի պատերազմի մեջ է, 18-ամյա հայ զինվորներն ու պայմանագրայինները կյանքի գնով սահման են պահում, ատամներով մաքառում են ամեն մի միլիմետրի համար, երկրի քաղաքական իշխանությունում մարդիկ կան, որ դեմ չեն հակառակորդին տարածքներ նվիրել: Գուցե վախենում են, որ պատերազմը նաեւ իրենց դուռը կարող է թակել, ու փորձում են սիրաշահել խաղաղությունը զենքով պարտադրող մեր վայ հարեւաններին, չեն հասկանում, սակայն, որ դա հարցի լուծում չէ:

Հայաստանում արդեն երրորդ օրն է՝ ծանր մարտեր են ընթանում, ինչի հետեւանքով, ըստ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ունենք 105 զոհ, եւ հակառակորդը 10 քառակուսի կիլոմետր օկուպացրել է Հայաստանից: Այս իրավիճակին զուգահեռ՝ այսօր ՀՀ գլխավոր դատախազը հրաժեշտի ցերեկույթ է կազմակերպել: Այսօր՝ ժամը 14:00-ի սահմաններում, Գլխավոր դատախազությունում կոլեգիայի նիստ կլինի, որից հետո Արթուր Դավթյանը հրաժեշտ կտա դատախազությանը եւ գլխավոր դատախազի ղեկը կհանձնի Աննա Վարդապետյանին: Հիշում եք՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ին, երբ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը հրաժեշտ տվեց պաշտոնին, բավականին սրտառուչ քայլ կատարեց: Դատախազ Հովսեփյանը համբուրեց դատախազության դուռը, ձեռքերը միացրեց, ինչպես աղոթքի ժամանակ խոնարհվեց եւ քայլելով հեռացավ դատախազությունից, ինչպես սրբավայրից կբաժանվեր: Հետաքրքիր է՝ Արթուր Դավթյանը կհամբուրի արդյոք դատախազության շենքի դուռը՝ ձեռքերը միացնելով, ինչպես աղոթքի ժամանակ, եւ կխոնարհվի, թե այլ կերպ կհեռանա:

Վերջին երկու տարիներին Ադրբեջանի ռազմական ծախսերը կտրուկ աճում են, իսկ Հայաստանինը՝ ոչ այդքան: Թշնամի պետությունն ավելացնում է իր ռազմական բյուջեն, իսկ մեր հանրապետությունը՝ պաշտոնյաների պարգեւատրման ֆոնդը: «Ժողովուրդ» օրաթերթը փոքրիկ ուսումնասիրության արդյունքում պարզեց, որ Հայաստանի ռազմական ծախսերը 2022-ի բյուջեով աճել են մոտ 11 տոկոսով՝ կազմելով ավելի քան 345,4 միլիարդ դրամ: Նշենք, որ 2021 թվականին բյուջեի ծախսերից պաշտպանությանը հատկացվել էր 312 միլիարդ դրամ, իսկ, ահա, Ադրբեջանի 2022 թ. պետբյուջեով պաշտպանական ոլորտին հատկացվել է մոտ 2,6 մլրդ դոլար: Բացի այդ, օրինակ՝ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հարցերով հետազոտական ինստիտուտի տվյալներով՝ 1995-2020թթ. Ադրբեջանի ռազմական ծախսերը մոտ 5 անգամ գերազանցել են Հայաստանի ցուցանիշը: 25 տարվա ընթացքում ՀՀ բյուջեով Պաշտպանության նախարարությանը հատկացվել է շուրջ 7.4 մլրդ դոլար, նույն ժամանակահատվածում Ադրբեջանը ծախսել է շուրջ 32.5 մլրդ դոլար: Միայն 2020թ. Հայաստանը ռազմական կարիքների համար ծախսել է 634 մլն դոլար, Ադրբեջանը՝ 2.2 մլրդ, փոխարենը վարչապետի աշխատակազմի պարգեւատրումների ֆոնդն է 2021 թվականի համեմատ աճել 8 մլն դրամով՝ կազմելով 756 մլն դրամ: 2021 թվականին՝ պատերազմից մեկ տարի անց, պարգեւատրումները, դրամական խրախուսումները եւ հատուկ վճարները կազմել են 18.8 մլրդ դրամ՝ 2020-ի 15.5 մլրդ դրամի համեմատ: Աճը կազմել է 21.7 տոկոս եւ ավելացել է 3.36 մլրդ դրամով: Էլ չենք խոսում կառավարության անդամների ծառայողական նոր ու թանկարժեք ավտոմեքենաների մասին, որոնք գնվել են պետական միջոցներով: Խոշոր գումարների պակաս չկա նաեւ վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի նախաձեռնությամբ ստեղծված «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամում, որին, ի դեպ, 2018-ին 510.000 դոլար ու 77 մլն 503 հազար դրամ է փոխանցվել, 2019-ին՝ 258 մլն 197 հազար դրամ, 50.200 դոլար ու 10 եվրո, 2020-ին 10 մլն 311 հազար դրամ ու 1019 դոլար է փոխանցվել անանուն, 2021-ին՝ 305.000 դրամ, բայց, միեւնույնն է, պարտվում ենք:

ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

345,4 միլիարդ դրամ	**32.5** միլիարդ դոլար

ՍՅՈՒՆԻՔ

ԴԻՐՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

«Հայաստանի տարածք թշնամին ներխուժել է, դա փաստ է, եւ մեր զինված ուժերը աշխատում են այդ ներխուժումը վերացնելու ուղղությամբ»,- սա հաստված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ խորհրդարանում երեկ՝ սեպտեմբերի 14-ին, օրենսդիր-գործադիր հարցուպատասխանի ժամանակ ունեցած ելույթից: Ըստ Փաշինյանի՝ Ադրբեջանը դեռևս նախորդ տարվա մայիսի 12-ին է 40 քառակուսի կմ տարածք օկուպացրել մեր երկրից: «Իսկ այս պահին կարող եմ ասել, որ եւս 10 քառակուսի կմ են օկուպացրել մեր երկրից»,- ասում է Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովում հայտարարել է նաեւ, որ Հայաստանը իր տարածքով Ադրբեջանին միջանցք չի տալու: Իրավիճակը սահմանին շարունակվում է լարված մնալ: «Ժողովուրդ» օրաթերթը իրավիճակի շուրջ զրուցել է Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, սյունեցի Դավիթ Դանիելյանի հետ:

-Պրն Դանիելյան, որպես սյունեցի պատգամավոր՝ ի՞նչ նոր տեղեկություններ կհաղորդեք Սյունիքից:

-Սյունիքում գերլարվածությունը պահպանվում է. թշնամու շարժը ամբողջությամբ երեւում է, ու ամեն րոպե սպասելի է նոր հարձակում: Ցավոք, ունենք զոհեր եւ վիրավորներ: Նրանք թե՛ Կապանի բժշկական կնետրոնում են, թե՛ Երեւան են տեղափոխվել: Բայց Երեւան են տեղափոխվել, ոչ թե որովհետեւ ծայրահեղ ծանր վիճակում են եղել, այլ նրա համար, որ հիվանդասենյակներում ազատ տեղեր լինեն, քանի որ ամեն պահի կարող է նոր բռնկում սկսվել, հետեւաբար նոր վիրավորներ ունենանք:

-Եթե ադրբեջանցիների տեղաշարժը մեզ տեսանելի է, ապա տրամաբանական է, որ մեր տեղաշարժն էլ հակառակորդին է հասանելի:

-Այսօրվա պատերազմում ամեն ինչ էլ հնարավոր է տեսնել, քանի որ տեխնոլոգիաների կռիվ է:

-Խոսքը հեռահար սարքավորումներով դիտարկելու մասին չէ:

-Բնականաբար տեսանելի կլինի, այդ իսկ պատճառով բոլոր դիրքերում մենք փորձում ենք քողարկել մեր զորքին, սակայն դա ավելի ռազմավարական հարց է, որին չեմ կարող պատասխանել: Այն, որ ամեն պահի վտանգ կա ու կարող է բռնկում լինել, բոլորս գիտակցում ենք եւ պատրաստ ենք դրան:

-Դիրքերի փոփոխության մասին է խոսվում եւ ինչքան էլ Դուք, ձեր թիմակիցները, պետական կառույցները հորդորեն, թե. «Հետեւեք պաշտոնական տեղեկատվությանը», քաղաքացին պետք է իմանա, թե ի՞նչ է կատարվում սահմանին, ու դիրքային ի՞նչ փոփոխություններ են կատարվել:

-Քաղաքացիները, բոլորն էլ տեղյակ են, որ ինչ-ինչ դիրքային փոփոխություններ են տեղի ունեցել: Այդ մասով կարծում եմ՝ ճիշտ կլինի պաշտպանության նախարարության պաշտոնական հայտարարություններին հետեւեն, քանի որ սահմանում իրականում փոփոխությունները շատ արագ են գրանցվում, ու չես կարող ասել, թե որ պահին, որ դիրքն ում կողմի վերահսկողության տակ է կամ կլինի: Այդ ամենը ռազմական գործողություններից հետո է որոշվում. հակառակորդը, հնարավոր է, հետ գնա կամ առաջ գա: Այդ մասին ես չէի ցանկանա մանրամասն խոսել:

-Ի՞նչ իրավիճակ է հասարակության մեջ՝ բարոյահոգեբանական տեսանկյունից:

-Նրանց, ովքեր անչափահաս երեխաներ ունեն, բնականաբար տեղափոխել ենք ավելի ապահով վայրեր, բայց գյուղացիները, որ կարողանում են ինչ-որ բանով օգնել, բոլորն իրենց տեղում են: Ամենքն էլ գիտակցում են՝ սա բոլորիս կռիվն է:

-Իսկ գյուղերում տարհանումներ կա՞ն:

-Ոչ, չկան: Հիմնականում անչափահասների ենք տարհանել:

-Ձեր իշխանությանը մեղադրում են այն բանի մեջ, որ խաղաղության օրակարգը Երեւան բերեցիք, դրա իրագործման ջատագովը դարձաք, բայց հիմա տեսնում ենք դրա «արդյունքը»: Հիմա ու՞ր է այդ խաղաղության օրակարգը:

-Մենք ամենինչ պետք է անենք, որ Հայաստանն արժանապատիվ խաղաղություն ունենանա: Շատերը չեն գիտակցում, թե ինչ է պատերազմը: Կհասկանան, երբ կգան սահման եւ կտեսնեն մեր եղբայրների կռիվը: Կհասկանան, որ պատերազմը սարսափելի երեւույթ է: Այո, պետք է խաղաղության գնանք, բայց դրան պետք է գնալ արժանապատիվ կերպով ու Հայաստանի սուվերենությունը չխախտելով: Մեր քաղաքական ուժն ասում է՝ այո, չի լինելու միջանցք, կարող է լինել ճանապարհ, որի վերահսկողությունը կիրականացնեն Հայաստանի համապատասխան մարմինները: Հայաստանի սուվերենությունը խախտելով՝ խաղաղություն հաստատելը ոչ թե խաղաղություն, այլ պարտություն է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԿՐԱԿ՝ ԳՅՈՒՂԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտնում է. «Թշնամին վնասել է Նորավանի եւ հարակից գյուղերի քաղաքացիական մի շարք ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ կրակ է բացել Նորավան գյուղի բարձրավոլտ լարերի ուղղությամբ, որի հետեւանքով արդեն 2 օր է, ինչ հոսանքազրկվել է Սիսիանի շրջանի 8 գյուղ: Կրակոցների հետեւանքով վնասվել են հիմանորոգված ճանապարհի մի քանի հատվածներ, բնակչի մեքենա, կոմբայն, շարքացան, փլուզվել է «Հովվի տան» շենքը:

Ինչպես գյուղապետն է նշում՝ բնակիչների մոտ խուճապ չկա: Որոշ բնակիչներ սեփական նախաձեռնությամբ գյուղից տարհանել են կանանց եւ երեխաներին»:

ՆԱԽԱՊԵՍ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ՝15:00-ին, վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարան պետք է գնար՝ հանդիպելու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հետ:

Փաշինյանը երեկ՝ խորհրդարանական նիստերի՝ կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի օրը, այսպես թե այնպես, ԱԺ գնալու էր, բայց, փաստորեն, մեկ ժամ շուտ է գնում՝ հանդիպելու թիմակիցների հետ:

Ըստ երեւույթին՝ նրանք սահմանին տիրող իրավիճակն են քննարկելու կամ էլ նախապես պայմանավորվեն, թե հարցուպատասխանի ժամանակ ով ինչ հարց է տալու վարչապետ Փաշինյանին:

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

«Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված հարձակման առնչությամբ մեր երկրում ռազմական դրություն հայտարարելու անհրաժեշտություն այս պահին չկա»: Երեկվա Ազգային ժողովի նիստում հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Նախորդ օրը կեսգիշերից Հայաստանում ռազմական դրություն հայտարարելու նախագիծը գտնվում է իմ սեղանին: Մենք Անվտանգության խորհրդի եւ այլ ձեւաչափերով պարբերաբար գնահատում ենք իրավիճակը եւ նման որոշում կայացնելու անհրաժեշտությունը: Քանի այդ որոշումը չենք կայացրել, նշանակում է, որ գտնում ենք, որ նման որոշման անհրաժեշտություն չկա, ոչ թե այն պատճառով, որ ագրեսիա չկա, այլ որովհետեւ դա շատ լուրջ որոշում է, որն ունի մի շարք մեխանիզմներ, որոնք միայն ռազմական բնույթի չեն»,- ասաց Փաշինյանը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արտերկրից Հայաստան ուղարկված մարդասիրական օգնության ծավալները բավականին ավելացել են: ArmLur.am-ը տեղեկացավ, որ անցյալ տարվա 7 ամիսներին՝ որպես մարդասիրական օգնություն, Հայաստան է ուղարկվել 26 մլն 218 հազար 700 դոլարի օգնություն: Իսկ այս տարվա հունվար-հուլիս ամիսներին Հայաստան ստացվել է 57 մլն 96 հազար 400 դոլարի չափով մարդասիրական օգնություն:

Ի դեպ, տեղեկացնենք, որ Հայաստանին մարդասիրական օգնություն ուղարկածների թվում են Եվրամիության անդամ շատ երկրներ: Գերմանիայից, օրինակ, Հայաստանը ստացել է 1 մլն 616 հազար 500 դոլարի չափով օգնություն: Ֆրանսիայից մարդասիրական օգնություն է ՀՀ եկել 1 մլն 69 հազար 400 դոլարի չափով: Ֆրանսիայից նախորդ տարվա հունվար-հուլիսին Հայաստան եկել է 1 մլն 187 հազար 500 դոլարի մարդասիրական օգնություն: Անցյալ տարվա յոթ ամիսներին Հայաստանը Շվեյցարիայից 738 հազար 400 դոլարի չափով մարդասիրական օգնություն է ստացել: Իսկ, ահա, այս տարվա նույն ժամանակահատվածում Շվեյցարիայից Հայաստան ուղարկվել է 4 մլն 205 հազար 600 դոլարի չափով մարդասիրական օգնություն:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ԱՊՀ երկրներից Հայաստանը 287 հազար 300 դոլարի չափով մարդասիրական օգնություն է ստացել, հիմնական հատվածը՝ Ռուսաստանից: Խոսքը 259 հազար 100 դոլարի մասին է: Ռուսաստանից անցյալ տարվա յոթ ամիսների ընթացքում որեւէ մարդասիրական օգնություն Հայաստան չի եկել: Իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում Ուկրաինայից ՀՀ եկել է 28 հազար 200 դոլարի չափով մարդասիրական օգնություն:

ԳՈՎԱԶԴ Է ԱՆՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԻ ԴԵՊՔԵՐԻ ՖՈՆԻՆ

Մինչ 18-ամյա պատանիներն ու ժամկետային զինծառայողներն ամեն պահի կյանքի ու մահվան կռիվ են տալիս Հայաստանի սահմանին, «Վիվարո» ընկերության հիմնադիր, տնօրեն Վիգեն Բադալյանը սեփական ընկերությունը գովազդելով է զբաղված: Հազարավոր մարդկանց առցանց խաղատների միջոցով սնանկության հասցրած, շահումով օնլայն խաղերի պատճառով տունտեղ վաճառելու պատճառ դարձած ընկերության տնօրենի դարդուցավն այս պահին, փաստորեն, իր ընկերությունը գովազդելն է: Facebook-ի նրա պատին տեղադրված գովազդից, ի դեպ, տեղեկանում ենք, որ հովանավորում է մի փառատոնի, ինչին մասնակցության տոմսի վրա «18+» գրությունը կա (այդ մասին ArmLur.am-ը դեռ մեկ շաբաթ առաջ էր գրել): Մարդու գլխում իսկապես չի տեղավորվում՝ ինչպես, ինչ սրտով է կարողանում հսկայական կառույցի ղեկավարն օրհասական այս օրերին փառատոնի կամ այն գովազդելու մասին մտածել: Երեւանից մի քանի կիլոմետր այն կողմ 18-ամյա տեղաներ են զոհվում, պայմանագրային զինծառայողներ են գերի ընկնում, հակառակորդի մոտ հարյուրավոր դիակներ կան, մարդկանց ճակատագրեր են խեղվում, հայրենազրկվում ենք, իսկ զուգահեռ իրականությունում Մալթայի քաղաքացի, Հայաստանում հարստացած գործարարը «18+» փառատոնն ու իր ընկերությունն է գովազդում:

ՀԵՏԱՁԳՎԵԼ Է ՀԱՐՑԸ

Իշխող ուժի քաղաքապետի թեկնածուի՝ Տիգրան Ավինյանի Երեւանի քաղաքապետարան տեղափոխվելն անորոշ ժամկետով հետաձգվել է: Նշենք, որ Երեւանի ավագանու սեպտեմբերի 13-ի նիստի օրակարգում ներառված էր նախկին փոխվարչապետ Տիգրան Ավինյանին փոխքաղաքապետ նշանակելու հարցը: Սակայն ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ավինյանին փոխքաղաքապետ նշանակելու վերաբերյալ հարցն օրակարգից հանվել է՝ սահմանային իրավիճակով պայմանավորված: Երեւանի քաղաքապետարանից ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս եւ այլ մի քանի հարցեր անորոշ ժամկետով ավագանու նիստի օրակարգից հանվել են:

ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

Հայաստանը Հավաքական անվտանգության խորհրդի կազմակերպությանը (ՀԱՊԿ) դիմել է Հավաքական անվտանգության պայմանագրի չորրորդ հոդվածի հիման վրա, որն ասում է՝ անդամ երկրներից մեկի նկատմամբ ագրեսիան համարվում է ագրեսիա մյուս երկրների նկատմամբ: Այս մասին Ազգային ժողովում հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Մենք ՀԱՊԿ-ից խնդրել ենք աջակցություն՝ այդ թվում եւ ռազմական՝ Հայաստանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու եւ Հայաստանի տարածքից ադրբեջանական զինված ուժերի դուրսբերումն ապահովելու համար»,- հայտարարեց Փաշինյանը:

Նա նշեց, որ հայկական կողմը նկատի է ունեցել նաեւ 2021 թվականի մայիսի 12-ին Սոթք-Խոզնավար հատվածում տեղի ունեցած ներխուժումը: «Սա մենք ֆիքսում ենք որպես քաղաքական նպատակ, որ ագրեսորը պետք է ՀՀ տարածքից դուրս գա»,- հայտարարեց վարչապետը:

Փաշինյանը գոհացուցիչ փաստ անվանեց սեպտեմբերի 13-ին ՀԱՊԿ նիստի գումարումը՝ կարծիք հայտնելով, որ տեղի է ունեցել անկեղծ ու բաց քննարկում: «Կարծում եմ՝ իրավիճակի գնահատման առումով նվազագույն անհրաժեշտ որոշումներն այս փուլի համար կայացվել են»,- նշեց նա:

Բարձրաձայնելով Հայաստանի քաղաքական դիրքորոշումը՝ Փաշինյանն ասաց. «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կա սահման, այդ սահմանը ճանաչված է, եւ այդ սահմանի ճանաչումը վավերացված է երկու երկրների կողմից: Եթե Ադրբեջանն ասում է, որ այդպիսի բան չկա, ընդհանուր համատեքստում նրա արտահայտած մի շարք դիրքորոշումներ ընդհանրապես զրկվում են իմաստից եւ որեւէ հիմնավորում չեն ունենում»:

Հայաստանը դեմարկացիայի եւ դելիմիտացիայի մասին խոսելիս հենվում է իրավական որոշումների վրա: Վարչապետի խոսքով դա մեր պետության որդեգրած տրամաբանական դիրքորոշումն է:

«Եթե խոսում ենք քարտեզների մասին, պետք է հենվենք այն քարտեզների վրա, որոնք իրենց հերթին հիմնված են իրավական որոշումների վրա: Առանց իրավական հիմքի, որեւէ քարտեզ պարզապես գեղանկարչություն է»,- հայտարարեց Փաշինյանը:

Նա նշեց, որ ուսումնասիրություններ են արվել, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանների կամ քարտեզների ինչ իրավական հիմքեր կան: «Մենք առաջարկել եւ առաջարկում ենք, որ հենց այս սկզբունքով իրականացվի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ դեմարկացիա եւ դելիմիտացիա: Սա նշանակում է, որ Խորհրդային Հայաստանն ու Խորհրդային Ադրբեջանը բաժանող սահմանները, որոնք, իմիջիայլոց, 1991 թվականին ԱՊՀ ձեւավորման Ալմա-Աթայի հռչակագրով, հետագայում նաեւ համապատասխան համաձայնագրով վավերացվել են խորհրդարանների կողմից, արդեն ճանաչվել են: Պնդումը, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահման չկա, ճիշտ չէ: Այդ սահմանը կա եւ այդ սահմանն այսօր խախտված է Ադրբեջանի կողմից, որը երկփուլանի ագրեսիա է իրականացրել. առաջին փուլը՝ 2021 թվականի մայիսի 12-ին, երկրորդը՝ հիմա»,- ասաց Փաշինյանը, նշելով, որ Ադրբեջանը կոնկրետ ագրեսիա է իրականացրել եւ իրականացնում, եւ Հայաստանը բոլոր դիվանագիտական, քաղաքական, ռազմաքաղաքական մեթոդները պետք է օգտագործի՝ իր տարածքային ամբողջականությունը, սուվերենությունը պաշտպանելու համար:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է ԿԻՍՎԵԼ

Ղազախստանը պատրաստակամություն է հայտնել՝ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանագծման իր փորձով կիսվել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ: Այս մասին ասել է Ղազախստանի արտաքին գործերի նախարար Մուխտար Թլեուբերդին:

ԼԱՉԻՆԸ ԿԳՈՐԾԻ

Լաչինի միջանցքի նոր ճանապարհը, որը Լեռնային Ղարաբաղը կապում է Հայաստանի հետ, կսկսի գործել 2023 թվականի ապրիլի 1-ից: Այս մասին «ՌԻԱ Նովոստի»-ի հետ զրույցում հայտնել է ՌԴ ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրեն Դենիս Գոնչարը:

«Վերջին ամսվա ընթացքում ձեռնարկած ջանքերի գլխավոր արդյունքն այն էր, որ ընդհանուր փոխըմբռնում է եղել, կապված նրա հետ, որ Լաչինի միջանցքով նոր ճանապարհը կսկսի գործել 2023 թվականի ապրիլի 1-ից: Միեւնույն ժամանակ օգոստոսի 30-ից երթեւեկությունն իրականացվում է ժամանակավոր ճանապարհով՝ շրջանցելով Լաչին քաղաքն ու այլ բնակավայրերը, որոնք գտնվում են միջանցքի հին մայրուղու անվտանգության գոտու սահմաններում», - ասել է դիվանագետը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի նահանգային խորհրդի անդամ Էդրին Նազարյանի ջանքերով ընդունվել է ապրիլի 24-ը՝ որպես Հայոց ցեղասպանության հիշատակի օր դարձնելու օրենսդրական նախաձեռնությունը: Օրենքը ենթադրում է, որ այսուհետ ամեն տարի ապրիլի 24-ին փակ են լինելու Կալիֆորնիայի համայնքային քոլեջներն ու հանրային դպրոցները, իսկ պետական աշխատողները կունենան վճարվող հանգստի հնարավորություն:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐԱՑՈՒՄ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մտադիր է Վլադիմիր Պուտինի հետ քննարկել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության սրացումը: Ինչպես հաղորդում է «ՏԱՍՍ»-ը՝ այս մասին հայտնում է Reuters-ը՝ հղում անելով թուրք բարձրաստիճան պաշտոնյային:

Նա մանրամասնել է, որ բանակցությունները կանցկացվեն Սամարղանդում՝ Շանհայի համագործակցության կազմակերպության գագաթաժողովի ընթացքում, որը նախատեսված է սեպտեմբերի 15-16-ը:

4 ՎԻՐԱՎՈՐ

2570 ԱՆՁԻՆՔ ՏԵՂԱՀԱՆՎԵԼ ԵՆ ՏՆԵՐԻՑ

Անընդմեջ շարունակվում են Մարդու իրավունքների դաշտպանի փաստահավաք աշխատանքները Սյունիքի, Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի մարզերի ադրբեջանական հարձակման ենթարկվող համայնքներում:

Ադրբեջանական զինված ուժերը թիրախավորում են քաղաքացիական բնակչությանը: Ըստ ՄԻՊ հավաքագրած տվյալների՝ քաղաքացիական վիրավորների թիվն երեկվա՝ 16:00-ի դրությամբ, 4-ն է. նրանցից երկուսին Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են հիվանդանոցում:

Ըստ պաշտպանի գրասենյակի հավաքագրած տվյալների՝ ադրբեջանական հարձակումից մինչ այս պահը առնվազն 2570 անձ տեղահանվել են իրենց տներից՝ Գեղարքունիքի մարզի Սոթք, Նորաբակ, Կութ, Ազատ, Այրք, Տրետուք, Կուտակավան, Սյունիքի մարզի Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Աղիտու, Ակներ, Վերին Շեն համայնքներից: Տեղահանվածների գերակշիռ մեծամասնությունը կանայք են, երեխաներ, տարեցներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք:

Նշված համայնքների երեխաները, բացի տեղահանման ու հոգեբանական դժվար իրավիճակից, զրկված են նաեւ կրթության իրավունքի իրացման հնարավորությունից:

Ինչպես տեղեկացրել էինք նախորդիվ, Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրվել էին շտապօգնության տրանսպորտային միջոցների թիրախավորման դեպքեր:

Մեծաթիվ են ապացույցները նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքների՝ անձանց տների, հաղորդակցության, էլեկտրականության ու քաղաքացիական այլ ենթակառուցվածքներ հրետակոծելու, գնդակոծելու եւ խափանելու վերաբերյալ: Հատկապես շատ են ավերածությունները Սոթք, Կութ, Քարաշեն, Վերիշեն համայնքներում, համանման փաստեր են հավաքագրվել նաեւ Գեղամասար, Աղիտու, Սրաշեն ու Նորավան համայնքներում:

Բազմաթիվ են շարունակաբար հարձակման ենթարկվող անձանց նյութական վնասները, մասնավորապես՝ շարժական ու այլ գույքի եւ ընտանի կենդանիների տեսքով:

Ադրբեջանական հրետակոծության հետեւանքով հրդեհներ են բռնկվել մի շարք համայնքներում, հատկապես՝ Սոթքում եւ Ջերմուկ քաղաքի անտառային հատվածներում՝ ներառելով ավելի քան 9 հա տարածք:

Փրկարարների աշխատանքն առավելապես բարդացնում է փաստը, որ հրդեհի որոշ օջախներ գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության գոտում, իսկ որոշ դեպքերում՝ այդ հատվածներն ակտիվ հրետակոծվում են:

Ադրբեջանական մեդիա տիրույթում արձանագրված հայատյացության մակարդակը, այդ թվում՝ պետական պաշտոնյաների կողմից, շատ վտանգավոր է, եւ ըստ նախորդիվ փորձի՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից պատերազմական հանցագործությունների կատարման մեծ ռիսկ է գեներացնում: Պաշտպանի աշխատակազմում ինտենսիվորեն ստացվող ու վերլուծվող տվյալներն ու ապացույցները՝ միջազգային իրավական հիմնավորումներով գրավոր կերպով ուղարկվում են միջազգային կազմակերպություններին եւ այլ դերակատարներին:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԹՅԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը մերժել է ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանի ազատման դիմումը ստորագրել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դիմումը մերժելը պայմանավորված է եղել երկրում պատերազմական իրավիճակով, մինչեւ հասկանան, թե երբ ամեն ինչ կավարտվի:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ զինվորական դատախազն այս օրերին պատրաստում է իր ազատման դիմումը: Ավելին՝ մեր աղբյուրները փոխանցում են, որ քաղաքական իշխանությունն այս պաշտոնի համար արդեն թեկնածու ունի, ում մասին առաջիկայում կխոսվի: Վերջինս ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Հայկ Գրիգորյանն է: Զինդատախազությունը, նկատենք, Գրիգորյանի համար անծանոթ կառույց չէ, քանի որ նա նախկինում աշխատել է Զինվորական քննչականում ու այնտեղ տարբեր պաշտոններ զբաղեցրել:

Հիշեցնենք, որ հուլիսի 5-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունում արշալույսները արդեն խաղաղ չեն: Չնայած Աննա Վարդապետյանը ՀՀ գլխավոր դատախազի աթոռը կզբաղեցնի սեպտեմբերի 15-ից, սակայն մինչ նրա գալը դատախազությունում արդեն որոշ պաշտոնյաներ տրամադրված են հեռանալ:

Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մինչ Աննա Վարդապետյանի գալը պաշտոնից ազատման դիմումներ կգրեն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Հայկ Ասլանյանը, ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը: Ասել է թե՝ նրանք չեն սպասի, որ իրենց ազատեն, այլ իրենք առաջ կընկնեն եւ ազատման դիմում կգրեն:

Գլխավոր դատախազի տեղակալներից Արմեն Աֆանդյանի հարցը մի քիչ այլ է. դատախազությունում վստահ են, որ Աննա Վարդապետյանը նրա հետ չի աշխատի, ուստի, այսպես, թե այնպես, նա եւս կազատվի պաշտոնից: Միակ տեղակալը, որը դատախազությունը չի լքի, Գեւորգ Բաղդասարյանն է:

Բանն այն է, որ նա թեեւ դատախազ Դավթյանի ընկերն է, բայց նաեւ «Մարտի 1-ի» գործով մեղադրող դատախազներից մեկն է եւ ծառայություն է մատուցել քաղաքական իշխանությանը»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԼՍԵՑ ԵՎ ՄԱՀԱՑԱՎ

Երեկ առավոտյան մահացել է 44-օրյա պատերազմի հերոս Մանվել Գեւորգյանի հայրը՝ Ռուդիկ Գեւորգյանը: Փաստաբան Գոռ Գեւորգյանը հայտնեց, որ երեկ՝ պատերազմի մասին լսելուց հետո, ոչ հաց է կերել, ոչ արձագանքել. «Առավոտյան չարթնացավ, գնաց հասավ հերոս որդուն՝ Մանվելիս»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 9-ին՝ ժամը 20.30-ի սահմաններում, «Հոնդա» մակնիշի մեքենայի վարորդը Երեւան-Արմավիր ճանապարհի 30-րդ կմ-ին վրաերթի էր ենթարկել 60-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց: Ոստիկանությունից հայտնում են, որ սեպտեմբերի 13-ին 60-ամյա Սանասար Միքաելյանը հիվանդանոցում մահացել է:

ԳԼՈՐՎԵԼ Է ԴԵՊԻ ՁՈՐԸ

Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, «Միցուբիշի» մակնիշի մեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 94-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ գլորվելով հայտնվել ձորակում: Ոստիկանությունից հայտնում են, որ վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ վարորդը՝ 28-ամյա Մ. Ասատրյանը, մահացել է:

ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 17:20-ի սահմաններում, Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում՝ դաշտամիջյան ճանապարհին, «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ գլորվել ձորը: Ոստիկանությունից հայտնում են, որ վարորդը՝ 64-ամյա Ջորիկ Բաբայանը, մահացել է:

2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵՊՔ

Սեպտեմբերի 10-ին ոստիկանության Կոտայքի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով հետախուզվողի գտնվելու վայրի վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որոնք Կոտայքի բաժնի քրեական հետախույզներն իրացրին՝ համագործակցելով մարզային վարչության եւ ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի ծառայողների հետ: Արդյունքում՝ Սեւանի թերակղզում հայտնաբերեցին եւ ձերբակալեցին 2019 թվականի հուլիսից սպանության եւ ապօրինի զենք ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու մեղադրանքով հետախուզվող 37-ամյա տղամարդուն: Հիշեցնենք, որ 2019 թվականի հուլիսի 15-ին Աբովյան քաղաքի 7-րդ դպրոցի խաղահրապարակում հայտնաբերվել էր նույն քաղաքի բնակիչ Վահե Գեւորգյանի դին՝ հրազենային եւ այլ վնասվածքներով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 23 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՔԱՏԵԼ ԵՆ ԼՈՒՅՍԵՐԸ

Տավուշի մարզի սահմանագոտում համեմատաբար խաղաղ է, սակայն, պայմանավորված հայ-ադրբեջանական սահմանի այլ հատվածներում տիրող լարված իրավիճակով, ելնելով անվտանգության նկատառումներով՝ սեպտեմբերի 13-ին Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Նոյեմբերյան քաղաքի Կողբ եւ Բերդավան գյուղերի հանրակրթակյան դպրոցների 1-5 դասարանները դաս չեն արել, իսկ 6-12-րդ դասարանների դասերը տեւել են 2-3 ժամ: Սեպտեմբերի 13-ի երեկոյան չեն միացրել սահմանամերձ Բերդավան գյուղի փողոցային լուսավորության համակարգը, որպեսզի գյուղը տեսանելի չլինի Բերդավանի դիմաց գտնվող ադրբեջանական հենակետերից:

ԱՆՄԽԻԹԱՐ ՓՈՂՈՑՆԵՐ

Մի քանի օր առաջ տուրիստական Դիլիջան քաղաքի կենտրոնում մեծ թվով սլավոնական արտաքինով զբոսաշրջիկներ կային, որոնց հանդիպել է «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը: Նրանք հիանում էին Դիլիջանի շքեղ բնությամբ, նաեւ զարմանք արտահայտում քաղաքի կենտրոնում՝ հայտնի «Միմինո» արձանախմբի հարեւանությամբ մեծ ջրափոսերի եւ թափառող շների առատությունից: Այդ արձանախմբի հետեւի մասով ձգվող փողոցում ասֆալտի թարմ շերտ է փռված, սակայն բազում փոսերի առկայությունը վկայում է, որ Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի ղեկավարած համայնքապետարանը ձախողել է Դիլիջանի կենտրոնական փողոցների վերանորոգման գործը: Դիլիջան քաղաքի ամենակենտրոնում՝ Աղստեւ գետի հունում, անտառ է աճել. համայնքապետարանը միջոցներ չի ձեռնարկում այն մաքրելու համար: Վարարումներից հետո գետը, բախվելով աճած բարձրացած ծառերին, մղվում է դեպի հունը եզրափակող, գետի աջ ափը պաշտպանող պատը՝ քանդելով դրա հիմքը: Հարց է ծագում՝ համայնքի ՔՊ-ական ղեկավարն այդ հողերի վաճառքից գոյացած գումարներից ինչո՞ւ միջոցներ չի հատկացնում գետի հունը մաքրելու, այնտեղ աճած ծառերը կտրելու աշխատանքները ֆինանսավորելու համար:

ԽԻՍՏ ԱՆՀԱՐՄԱՐԱՎԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցանկություն է հայտնել, որ հայ գիտնականները մասնակցեն Մարս մոլորակի բնակեցման քաղաքակրթական մեգանախագծին:

Նիկոլ Փաշինյանը մինչեւ հեռավոր Մարսը մոլորակը բնակեցնելու անհրատեսական խնդրով զբաղվելը, թող լուծի Երեւանից իր հայրենի Իջեւան, նաեւ՝ Դիլիջան մեկնող հասարակական տրանսպորտի արդիականացման հարցը, քանզի բարոյապես եւ ֆիզիկապես մաշված «Գազելները» վթարների դեպքում շատ վտանգավոր են ուղեւորների կյանքի համար: Բացի դրանից, այդ միկրոավտոբուսները ուղեւորների համար խիստ անհարմարավետ են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԻՆՎԱԾ ԱԳՐԵՍԻԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Իտալիայի խորհրդարանի վերին եւ ստորին պալատների մի խումբ ներկայացուցիչներ հայտարարություն են տարածել հայ-ադրբեջանական սահմանին բռնկված հակամարտության վերաբերյալ՝ կոչ անելով դադարեցնել զինված ագրեսիան՝ հստակ մատնանշելով, որ այն տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում: Այս մասին հաղորդում է Իտալիայում ՀՀ դեսպանությունը՝ վկայակոչելով իտալացի խորհրդարանականների համատեղ հայտարարությունը:

Իտալացի խորհրդարանականները հույս են հայտնել, որ միջազգային հանրությունը բացահայտորեն կդատապարտի ագրեսոր կողմին:

«Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում բռնկված ողբերգական հակամարտության լույսի ներքո եւ վշտացած զոհերի ընտանիքներով, որոնց թիվը, պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, ցավոք, շարունակում է աճել, հույս ենք հայտնում, որ զինված ագրեսիան անմիջապես կդադարի, եւ որ միջազգային հանրությունը բացահայտորեն կդատապարտի ագրեսորին եւ ցանկացած գործողություն, որը խախտում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը», - հայտարարել են Իտալիայի խորհրդարանականները:

Իտալիայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը շնորհակալություն է հայտնել հայտարարությունը ստորագրած բոլոր խորհրդարանականներին, մասնավորապես՝ Պաոլա Բինետտիին, Ստեֆանո Բորգեզիին, Ումբերտո Բուրատտիին, Լաուրա Կավանդոլիին, Ջուլիո Չենտեմերոյին, Վիտո Կոմենչինիին, Ջուզեպպե Դոնինային, Պաոլո Ֆորմենտինիին, Նիկոլո Ինվիդիային, Ելենա Մուրելլիին, Տուլիո Պատասինիին, Կատիա Պոլիդորիին, Ալբերտո Ռիբոլլային եւ Ջովաննի Տոմբոլատոյին՝ դավանած բարձր արժեքների եւ մշտապես արդարության կողքին կանգնելու համար:

Առանձին գրառումներ են արել նաեւ իտալական պառլամենտի վերին եւ ստորին պալատի մի շարք ներկայացուցիչներ: Ըստ Իտալիայում ՀՀ դեսպանության՝ Իտալիայի պատգամավորների պալատի անդամ Մասսիմիլիանո Կապիտանիոն դատապարտել է հարձակումը Հայաստանի վրա՝ հույս հայտնելով, որ հրադադարի մասին հայտարարությունը կհարգվի, եւ հայ ժողովուրդը կկարողանա վերջապես խաղաղ ապրել՝ առանց շարունակական եւ չարդարացված ագրեսիայի ենթարկվելու:

«Պետք է վերջ դնել պատերազմին», - շեշտել է իտալացի պատգամավորը:

Իտալիայի Սենատի անդամ Ալբերտո Միրոլան խիստ մտահոգություն է հայտնել սեպտեմբերի 13-ին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տեղի ունեցած զինված բախումների առնչությամբ՝ նշելով, որ դա զինադադարի լուրջ խախտում է ադրբեջանական ուժերի ագրեսիայի հետեւանքով, որը տասնյակ զոհերի պատճառ է դարձել հայկական կողմից:

«Բռնության գործողությունները պետք է դատապարտվեն: Էսկալացիա, որը սպառնում է նորից պայթեցնել հակամարտությունը, որը ներկայիս միջազգային լարվածության շրջանակներում կարող է նոր եւ շատ վտանգավոր հակամարտության ճակատ բացել Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ՝ ամբողջությամբ բխում է Էրդողանի, Թուրքիայի շահերից, որն արդեն երկար ժամանակ թեժացնում է կրակը՝ հետապնդելով նեոօսմանյան հեգեմոնիայի իր ծրագրերը: Հուսով եմ, որ միջազգային հանրությունը կմոբիլիզացվի՝ Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղությունը վերականգնելու եւ պահպանելու համար», - Ֆեյսբուքի իր էջում գրել է Միրոլան:

Իտալիայի Սենատի անդամ, Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում «Առաջ, Իտալիա» կուսակցության խմբի ղեկավար Էնրիկո Սիմին նշել է, որ սեպտեմբերի 13-ի գիշերը Ադրբեջանի կողմից ձեռնարկված հարձակման հետեւանքով 49 հայ զինվորների զոհվելու փաստը մեծ տագնապ է ստեղծել Եվրոպայում եւ ամբողջ աշխարհում: Նրա խոսքով՝ միջազգային հանրությունը պետք է իր ողջ վրդովմունքն արտահայտի՝ բացարձակապես դատապարտելի այդ արարքի համար:

«Մենք մեր աղոթքով մոտ ենք զոհվածների ընտանիքներին: Անհրաժեշտ է նաեւ, որ հակամարտությունը արագ դադարեցվի իր սկզբնական փուլում՝ խուսափելու ավելի լուրջ հետեւանքներից, որոնք կարող են ապակայունացնել իրավիճակը, ինչը փորձ է արվում դժվարությամբ պահպանելու այդպիսի խնդրահարույց տարածքում», - նշել է իտալացի սենատորը:

ԿՈՂ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԺԱՄԻՋՈՑ

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Մեծ Բրիտանիա-Հայաստան բարեկամական խումբը դատապարտել է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան:

Բարեկամական խմբի բոլոր անդամների անունից Ադրբեջանի գործողությունները դատապարտող հայտարարություն է տարածել խմբի ղեկավար Թիմ Լոութենը:

«Վերջին 24 ժամվա ընթացքում Ադրբեջանը նոր՝ դաժան հարձակումներ է ձեռնարկել Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա, որը ձգվում է Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերով: Ադրբեջանը հարվածներ է հասցնում ոչ միայն ռազմական օբյեկտներին, այլեւ քաղաքացիական համայնքներին եւ ենթակառուցվածքներին: Այդ հարձակումներն ուղղված էին ոչ թե Լեռնային Ղարաբաղի վիճելի շրջանին, այլ հենց Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սուվերեն սահմաններին եւ միանգամայն անհիմն էին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատել է, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ին, Ադրբեջանի զինված ուժերը ինտենսիվ կրակ են բացել հայկական դիրքերի ուղղությամբ՝ օգտագործելով նաեւ անօդաչու թռչող սարքեր:

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Մեծ Բրիտանիա-Հայաստան բարեկամական խումբը դատապարտում է ադրբեջանական ռեժիմի բռնության այս վերջին գործողությունը եւ իր խորը մտահոգությունն է հայտնում զոհերի եւ նրանց ընտանիքների համար»,- նշված է հայտարարության մեջ:

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Մեծ Բրիտանիա-Հայաստան բարեկամական խումբը կարծում է, որ այս ագրեսիան հստակ հաշվարկված էր, քանի որ ամբողջ աշխարհի ուշադրությունը շեղվել է Ուկրաինայի իրադարձությունների, իսկ վերջերս՝ թագուհի Եղիսաբեթի մահվան կապակցությամբ համատարած սգի վրա: Նշում են, որ նման ագրեսիվ օպորտունիզմը պետք է դատապարտվի ամենավճռական ձեւով եւ ստանա վճռական պատասխան:

«Շատ հրատապ անհրաժեշտություն կա, որ միջազգային հանրությունը՝ ներառյալ Մեծ Բրիտանիան, դատապարտի Ադրբեջանին եւ պատասխանատվության կանչի նրան այդ վերջին ռազմական հանցագործությունների համար: Մենք խնդրում ենք Մեծ Բրիտանիայի կառավարությանը միանալ մյուս երկրներին՝ պահանջելով անհապաղ դադարեցնել Ադրբեջանի ագրեսիան եւ պատժամիջոցներ սահմանել այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրը շարունակում է իր չարդարացված գործողությունները: Մենք նաեւ խնդրում ենք Մեծ Բրիտանիայի կառավարությանն աջակցել Միավորված ազգերի կազմակերպությանն ուղղված խնդրանքին՝ այս հարցը քննարկելու Ախ արտակարգ նիստում եւ աջակցելու ռազմական գործողությունների դադարեցմանը»,- նշված է հայտարարության մեջ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՏԱՐԿԵՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ ազգային ժողովը քննարկեց կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը, որով առաջարկվում է սահմանել, որ բուհերում սովորելու համար զինծառայությունից տարկետում ստացածները զորակոչի ենթակա կլինեն ոչ թե մինչեւ 27, այլ 28 տարեկանը: «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը:

«Առաջարկվում է նրանց համար, որոնք տարկետումը ստացել են սովորելու առնչությամբ, զորակոչի տարիք սահմանել 28 տարեկանը՝ 27-ի փոխարեն»,-ասաց Դումանյանը:

Նրա խոսքով՝ տարկետման տրամադրման պայմանները, բուհերի ցանկը, մասնագիտությունների ցանկը կսահմանի կառավարությունը: Խոսքը բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական ուղղությունների մասին է:

ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց զենքի շրջանառության կարգավորման նոր օրինագիծը: ՔՊ խմբակցության պատգամավորների ներկայացրած «Զենքի շրջանառության կարգավորման մասին» եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը քվեարկությամբ ստացավ 67 կողմ ձայն:

«Նախագծով ակնկալվում է ՀՀ-ում կարգավորել զենքի եւ ռազմամթերքի շրջանառությունը, նպաստել որսորդության, սիրողական եւ սպորտային հրաձգության, ինչպես նաեւ ռազմամարզության զարգացմանը. ներդնել զենքի հետ վարվելու մշակույթ, որն ուղղված կլինի քաղաքացիների ինքնապաշտպանության եւ մարտունակության բարձրացմանը»,-ասաց համահեղինակ Վիլեն Գաբրիելյանը:

Նոր օրենքով նաեւ առաջարկվում է 18-ի փոխարեն ակոսափող զենք կրելու իրավունք տալ 21 տարին լրացած անձանց: Օրենքը սահմանում է, որ քննությունը բարեհաջող հանձնելուց հետո քաղաքացին զենք ձեռք բերելու եւ պահելու թույլտվությունը ստանում է 10 տարի ժամկետով: 10 տարվա ընթացքում քաղաքացին կարող է այդ վկայականով նոր զենքեր ձեռք բերել, սակայն ամեն նոր զենք ձեռք բերելու համար նա պարտավոր կլինի անցնել բուժզննման բոլոր անհրաժեշտ փուլերը:

Նախագիծը նախատեսում է քաղաքացիական զենք ձեռք բերելու կանոնների խստացում այն անձանց համար, որոնք առաջին անգամ են նման հայտ ներկայացնում, միեւնույն ժամանակ այն ավելի շատ ու ավելի լավ զենքեր ձեռք բերելու հնարավորություն է բացելու զենքի սիրահարների համար, որոնք անցած տարիների ընթացքում անցել են զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու անհրաժեշտ փուլերը եւ հավաքածուում ունեն որոշակի քանակի զենքեր:

ՀՐԴԵՀ

ՀԱՐՎԱԾ՝ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ

Վայոց Ձորի Ջերմուկ քաղաքի հարակից սարերի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերը պարբերաբար հրետանի են կիրառում, շաս հազվադեպ կրակում նաեւ հրազենից: Պայթյուններ ի ձայները լսվում են 15-20 րոպեն մեկ:

Պարբերաբար հրանոթային համազարկերի ձայներ են լսվում, քաղաքին հարող որոշ բլուրների վրա էլ ծխացող օջախներ կան՝ այրվել է անտառի մի հատվածը: Քաղաքացիները հայտնել են, որ դրանք ադրբեջանական կողմի հարվածների հետքերն են: Ջերմուկի հարակից սարերի վերեւում նաեւ անօդաչու թռչող սարք է կիրառվել:

Առողջարանային քաղաքում երեկ առավոտից սկսվել են ուժեղ համազարկերը դիրքերի ուղղությամբ, իսկ անմիջապես Ջերմուկի ուղղությամբ հրետանին չի հարվածել: Ջերմուկում առողջարանային քաղաքին ոչ բնորոշ վիճակ է՝ հանգստացողներ չկան, կանայք ու երեխաները տարհանվել են:

Քաղաքապետ Վահագն Արսենյանը, նրա տեղակալները, ոստիկանապետը զինվել են, կազմել ինքնապաշտպանական ջոկատներ:

Վայք-Սիսիան մայրուղուց դեպի Ջերմուկ գնացող հատվածը հսկում են զինծառայողներն ու ոստիկանները. քաղաք մուտք գործել թույլ են տալիս միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Հայ-ադրբեջանական սահմանին ժամը 18:00-ի դրությամբ իրադրությունը շարունակում է լարված մնալ: Ժամը 15:00-ից 17:00-ն ընկած հատվածում Սոթքից մինչեւ Գորիս ամբողջ սահմանագծով, թշնամին շարունակել է ինտենսիվ հրթիռահրետանային հարվածները, որոնց ընթացքում թիրախավորվել են նաեւ խաղաղ բնակավայրերը:

Այս մասին հայտարարեց պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արամ Թորոսյանը:

Նա նշեց, որ լայնորեն կիրառվել են հարվածային անօդաչու թռչող սարքեր:

«16:40-ի սահմաններում հրթիռահրետանային հարվածներ են հասցվել Սոթքի ուղղությամբ տեղակայված զորամասին, ինչի հետեւանքով հրդեհ է բռնկվել: Այս պահին հրդեհը մարվել է: Ժամը 17:00-ից նշված ուղղությամբ թշնամու հրթիռահրետանային հարվածների ինտենսիվությունը թուլացել է»,-ասաց նա՝ հավելելով, որ ՀՀ ԶՈՒ-ն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները թշնամուն համարժեք պատասխանելու համար:

Արամ Թորոսյանը հիշեցրեց, որ հայկական կողմի զոհերի՝ այս պահին հաստատված թիվը 105-ն է: Լուրը հրապարակվել է երեկ Ազգային ժողովի ամբիոնից՝ վարչապետի կողմից, իսկ վիրավորների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար գործում է պաշտպանության նախարարության թեժ գծի 1-28 հեռախոսահամարը:

Պաշտպանության նախարարությունը կշարունակի պարբերաբար հանդես գալ իրադրության վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություններով:

ԼՈՒՐԵՐ

ՀՈՍՊԻՏԱԼՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԵՆ

Ադրբեջանական ռազմական ագրեսիայի ֆոնին՝ հաճախակի են դարձել դեպքերը, երբ բազմաթիվ քաղաքացիներ եւ մասնավոր ընկերություններ, փորձելով օգտակար լինել մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին, սեփական նախաձեռնությամբ տարբեր դեղամիջոցներ եւ սնունդ են ձեռք բերում՝ այն զինվորական հոսպիտալներին փոխանցելու նպատակով:

Պաշտպանության նախարարությունը բարձր է գնահատում մեր համաքաղաքացիների պատրաստակամությունը՝ հնարավորության սահմաններում օգտակար լինել բանակին:

«Այդուհանդերձ, վստահեցնում ենք, որ բոլոր հոսպիտալներն ապահովված են զինծառայողների բուժումը պատշաճ կերպով կազմակերպելու համար:

Միեւնույն ժամանակ, քաղաքացիների՝ հոսպիտալներին օգնություն փոխանցելու գործընթացը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում բուժհաստատության անձնակազմի համար, ինչն այս պահին անցանկալի է», - այս մասին հայտնում են ՀՀ ՊՆ-ից:

ՀԱՆՑԱՎՈՐ ՌԵԺԻՄ

Եվրախորհրդարանի շատ պատգամավորներ կոչ են արել Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայեին գազ չգնել Հայաստանի ինքնիշխան տարածքը գրոհող Ադրբեջանից եւ միջոցներ ձեռնարկել ռազմական գործողությունները դադարեցնելու համար:

«Մենք չենք կարող թույլ տալ Գերմանիային չփակել ատոմակայանները, բայց միեւնույն ժամանակ՝ գազ ներկրել Ադրբեջանից եւ կախված լինել մեկ այլ հանցավոր ռեժիմից: Հուսով եմ, որ մենք բոլորս դեմ կլինենք Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ագրեսիային Հայաստանի դեմ»,-ասել է ֆրանսիացի պատգամավոր Ֆրանսուա-Քսավյե Բելամին: «Հայաստանի բարեկամ ժողովրդին գազային շահերի անունից զերծ մնալը, ինչպես անում է ԵՄ-ն, դավաճանություն է»,-շեշտել է ֆրանսիացի մեկ այլ պատգամավոր Ջորդան Բարդելլան:

Բուլղարիայից պատգամավոր Անդրեյ Կովաչովն իր հերթին ԵՀ նախագահին կոչ է արել անել հնարավորը՝ մարդկանց սպանությունը դադարեցնելու համար: «Եվրամիությունը պետք է միջնորդի դեր ստանձնի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»,-ասել է նա:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես գիտենք սեպտեմբերի 12-ից՝ կեսգիշերից, Ադրբեջանը հարձակում է սկսել Հայաստանի Հանրապետության վրա: Սահմանային լարված իրավիճակի մասին իրենց մտահոգություններով են կիսվել նաեւ հայ հայտնիները:

ArmLur.am-ը, այսպիսով, ներկայացնում է նրանցից մի քանիսին:

Հաղորդավարուհի, դերասանուհի Նազենի Հովհաննիսյանը, անդրադառնալով սահմանային իրավիճակի մասին, իր միկրոբլոգում գրել է.

«2 տարում լավ կազմակերպված վերջնական կոտրեցին մեզ՝ ոգով, հոգով, զենքի բացակայությամբ, գոյություն չունեցող «խաղաղության» քարոզով ու արժանապատվությունն իսպառ տրորելով: Թշնամին ռեւանշիզմի իրավունք ունի, իսկ հայը՝ իր ԵՐԿԻՐԸ պաշտպանելու իրավունք՝ չունի:

Արծրունը չի գրել՞, որ հաղթում ենք...

դեռ կոչ չեն արել՞ տանն ով ինչ կասկա ունի վերցնի գնա..

Հիմա հիմնադրամ կ՞ա , ներսի ու դրսի հայերը էլ ո՞նց հավատան..

էն զինվորների մայրերը ի՞նչ լինեն...

էս ոնց քանդեցիք ախր, Աստծո անեծքը ձեզ վրա ու ձեր սերնդների:

Երիցս»:

Դերասնուհի Տաթեւ Հովակիմյան. «Ադրբեջանը հարձակվել է Հայաստանի վրա, եւ Հայաստանում պատերազմ է...: Իմ էջերում բացի պաշտոնական տեղեկություններից չեք տեսնելու այլ գրառում... Մուսի-պուսի, հաղթելու ենք ու նմանօրինակ գրառումներ,նկարներ՝ տղերքի, ում հերոսացնում ենք, քարտեզներ, ոչ մի բան...Ու նույնը խորհուրդ կտամ ձեզ կամ անգամ կխնդրեմ ձեզ... Հաղթում է զուսպը, ու հաճախ նա, ով լռում է... 2020-ին աղմուկը կարեւոր բաներ էր կոծկում ու լղոզում...»:

Աղաս Մանուկյան. «Ջոհվել չկա տղերք...»:

Դերասան Լեվս Դավթյան. «Մանիպուլացրեց, բժժացրեց, հանգստացրեց ժեխին, իրար գովացին, համոզեց որ մեռնելը լավա հայրենիքի համար, բայց սգալը սխալ, ու իրան խանգարող չկար...»:

Երգչուհի Սիրուշոն այս օրերին Նյու Յորքում է. մասնակցում է նորաձեւության շաբաթին:

Երգչուհին ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում անդրադարձել է իրավիճակին՝ հայտնելով վերադարձի մասին:

«Հայաստանում սկսվել է պատերազմ, եւ ես վերադառնում եմ Երեւան: Խնդրում եմ՝ աղոթեք հայրենիքիս համար»,- գրել է երգչուհին:

Նշենք, որ սեպտեմբերի 14-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ ժամը 08:00-ից սկսած հակառակորդը, կիրառելով հրետանային միջոցներ, ականենտներով եւ խոշոր տրամաչափի զինատեսակներով կրկին սկսել է նախահարձակ գործողություններ, մասնավորապես՝ Ջերմուկի եւ Վերին Շորժայի ուղղություններով:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՈՒԺԸ»

4 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում օգոստոսի 20-28-ը «Թանգարանների ուժը» խորագրի ներքո անցկացվել է Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) 26-րդ վեհաժողովը, որին մասնակցել է նաեւ Հայաստանի պատվիրակությունը:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության տարածած հաղորդագրությունից տեղեկացանք, որ գերատեսչության փոխնախարար Ալֆրեդ Քոչարյանը սեպտեմբերի 9-ին ընդունել է Հայաստանի պատվիրակության անդամներին՝ քննարկելու վեհաժողովի արդյունքները եւ ձեռք բերված համագործակցության հեռանկարները: Փոխնախարարը ողջունել է պատվիրակության անդամներին՝ կարեւորելով նմանօրինակ միջազգային հարթակին Հայաստանի մասնակցությունը:

Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարանների 18 ներկայացուցիչներ (Հայաստանի պատմության թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Ռուսական արվեստի թանգարան, Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, Մատենադարան, Երեւանի պատմության թանգարան, Ժամանակակից արվեստի թանգարան):

Պատվիրակության անդամների տեղեկացմամբ՝ քննարկվել են առնվազն 4 միջազգային կոմիտեների տարեկան վեհաժողովները Հայաստանում հյուրընկալելու հեռանկարները: Դրանք են՝ գրական եւ կոմպոզիտորների թանգարանների, ցուցադրությունների փոխանակման, երաժշտական գործիքների եւ երաժշտական թանգարանների, ինչպես նաեւ անձնակազմի վերապատրաստման միջազգային կոմիտեները:

Վեհաժողովի հայաստանյան ներկայացուցիչները տեղեկացրել են, որ ԻԿՕՄ-ի վտանգների կառավարման եւ ռազմական թանգարանների միջազգային կոմիտեների կազմակերպած համատեղ նիստին ԻԿՕՄ Ադրբեջանի նախագահը ներկայացրել է հակահայ զեկույց, ինչին ի պատասխան՝ ԻԿՕՄ Հայաստանի նախագահ Հայկ Մկրտչյանը կազմակերպիչ կոմիտեներին հանձնել է Հայաստանի պատվիրակների պատրաստած եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցրած բողոք-նամակը՝ ընդգծելով, որ պրոֆեսիոնալ հարթակը չպետք է վերածվի քաղաքականի: Ներկայացվել է նաեւ Արցախում ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացված պատերազմական հանցագործությունների՝ մշակութային ժառանգության ոչնչացման վերաբերյալ զեկույցը:

ԻԿՕՄ-ի վեհաժողովներն անցկացվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ եւ համարվում են թանգարանային ոլորտի ամենակարեւոր մասնագիտական իրադարձությունները: Գլխավոր համաժողովները փորձի փոխանակման, ոլորտի նորարար գաղափարներն ու հեռանկարները քննարկելու, ինչպես նաեւ նոր կապերի հաստատման համար եզակի հնարավորություն են: Վեհաժողովին մասնակցել են 115 երկրների թանգարանային ոլորտի շուրջ 3000 ներկայացուցիչներ:

Այս առումով վեհաժողովի հայաստանյան ներկայացուցիչներն այցը գնահատել են դրական. ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

Վեհաժողովի ընթացքում ԻԿՕՄ-ի կողմից հաստատվել է «թանգարան» եզրույթի նոր սահմանումը, որի օգտին քվեարկել են նաեւ հայ պատվիրակները:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱՁԳԵԼ ԵՆ ՀԱՄԵՐԳԸ

Հայաստանում պատերազմական լարված դրության պատճառով՝ երգիչներ Գոռ Հակոբյանը եւ Գեւորգ Մարտիրոսյանը անորոշ ժամանակով հետաձգել են համատեղ համերգը: Այս մասին հայտնում է երգիչ Գոռ Հակոբյանը:

«Ելնելով երկրում աստեղծված իրավիճակից սեպտեմբերի 30-ին կայանալիք իմ եւ Գեւորգ Մարտիրոսյանի համերգը հետաձգվում է անորոշ ժամանակով»,-նշել է երգիչը:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ երգիչների համատեղ համերգային ծրագրի խորագիրը «Ինադու» է, այն պետք է կայանար սեպտեմբերի 30-ին:

Հիշեցնենք, որ սեպտմբերի 12-ին լույս 13-ի գիշերը Ադրբեջանը լայնածավալ հարձակում է սկսել Հայաստանի Հանրապետության սահմանային ողջ երկայնքով:

ԳՅՈՒՂՈՒՄ ԵՆ

«Սյունիքի մարզի սահմանային Ներքին Հանդում այս պահին ամեն ինչ նորմալ է, կրակոցներ գրեթե չկան»: Երեկ այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը:

«Ամեն ինչ նորմալ է, մի սուտկա կլինի չեն կրակել, հանգիստ է: Բնակիչները գյուղում են՝ մարտական տրամադրված»,-նշեց նա:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները Վարդենիսի, Սոթքի, Արտանիշի, Իշխանասարի, Գորիսի եւ Կապանի ուղղություններով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ:

Նյութերը՝Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ

ԱՂՈԹԵՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Ամերիկացի հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը «Ինստագրամ»-ի իր պաշտոնական էջի միջոցով անդրադարձել է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիային:

Քարդաշյանը իր գրառման մեջ ասում է, որ մարդիկ կարող են սովորականի պես սկսել օրը. համբուրել երեխաներին եւ կնոջն ու գնալ աշխատանքի, սակայն, երեկոյան տուն վերադառնալուց հետո, ստիպված լինեն վերցնել ընտանիքի անդամներին եւ հեռանալ՝ նրանց եւ սեփական կյանքը փրկելու համար:

«Պատկերացրեք՝ ստիպված եք դա անել՝ առանց ֆինանսական միջոցների, տրանսպորտի, առանց ռեսուրսների եւ որեւէ օգնության: Հայաստանը ստիպված չէ պատկերացնել վերոնշյալ իրավիճակը, քանի որ երեկվանից այդ ամենը նրա համար իրականություն է: Եվ միակ նախազգուշացումը բնակիչների տան բակերում ընկած հրթիռներն են: Աղոթեք Հայաստանի համար»,-ասվում է գրառման մեջ:

● *Սեպտեմբերի 17-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա Նորաձեւության շոու՝«Ժամանակը եւ մարդը…»: Տոմսերի արժեքը՝5000-15000 դրամ: Սկիզբը՝21:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում քրեական վարույթների միացումը եւ անջատումը:

Հայկուհի Մինասյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեկ վարույթում կարող են միացվել՝

1) նույն անձի կողմից մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները

2) մեկից ավելի անձանց կողմից նույն կամ մեկից ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթները

3) միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված մեկից ավելի ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթները՝ պատշաճ եւ համակողմանի քննություն ապահովելու նպատակով:

Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ եւ չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քրեական վարույթները միացնելու կամ անջատելու մասին քննիչը կամ դատարանը կայացնում է որոշում, որում նշվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, ենթադրյալ հանցանքի փաստական հանգամանքները, հայտնի լինելու դեպքում՝ քրեորեն հետապնդելի արարքը կատարելու մեջ մեղադրվող անձի (անձանց) տվյալները, միացված կամ անջատված վարույթն ստանձնող մարմնի կամ պաշտոնատար անձի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաեւ անջատված վարույթին տրվող համարը:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում մաքսային կանոնների խախտում:

Լավրենտ Թադեւոսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության եւ մաքսային ձեւակերպման սահմանված կարգի դեմ, եւ, որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Ջերմուկ քաղաքում



Հայաստանի Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում ադրբեջանական զինուժը կրակել է քաղաքացիական մեքենայի վրա: Մեքենայի վարորդը հոսպիտալացվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: